ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՐԻՆԵՐ:

«Աթուռ» կազմակերպության նախաձեռնությամբ 2014 թ. փետրվարի 21-ին Վերին Դվինի դպրոցում կազմակերպվել է ասորերենին նվիրված «Այբենարանի օր» խորագրով միջոցառումը:

ՀՀ Արարատի մարզի ասորաբնակ Վերին Դվին համայնքը, կարևորելով ուսուցիչների վերապատրաստման անհրաժեշտությունը, իրենց նախաձեռնությամբ և միջոցներով 2013թ. Շվեդիայից հրավիրված մասանգետի կողմից դասընթացներ են կազմակերպել, որի արդյունքում ուսուցիչները նոր հմտություններ են ձեռք բերել: ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնիի արցերի բաժինը պատրաստակամություն է հայտնել քննարկելու ծրագրի շարունակականությանը նպաստելու համար աջակցություն ցույց տալու հարցը՝ դրա վերաբերյալ գրավոր դիմում ստանալու դեպքում:

ՔՐԴԵՐ:

2012 թ. հրատարակվել են հանրակթական դպրոցների համար նախատեսված 2-րդ, 3-րդև 4-րդ դասարանների քրդերենի դասագրքերը, իսկ 2014 թ.՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների համար նախատեսված դասագրքերը: Դասագրքերը կազմվել են ազգությամբ քուրդ, քրդական «Զագրոս» պարբերականի խմբագիր Ալիխանե Մամեի հեղինակությամբ: 2012 և 2014 թթ. ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ գյուղում տեղի է ունեցել դասագրքերի շնորհանդեսը:

2012 թ. ՀՀ Արագածոտնի մարզում անցկացվել է քրդերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: 2014թ. ՀՀ կրթության ազգային ինստիտուտի մարզային բաժնի կողմից կազմակերպվել են 18 ժամյա դասընթացներ քրդերենի 20 ուսուցիչների համար:

Հայաստանի գրողների միության կազմում Ալիխանե Մամեի ղեկավարությամբ գործում է քուրդ գրողների մասնաճյուղ:

Պետական միջոցների շրջանակներում հրատարակվում են քուրդ գրողների ստեղծագործությունները: 2012 և 2014 թթ. ՀՀ մշակույթի նախարարությունը լույս է

ընծայել «Ալմանախ» ժողովածուն, ուր ընդգրկված են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործությունները:
Քուրդ գրող Ալիխանե Մամեն 2012 թ. արժանացել է «Մովսես Խորենացու» անվան պետական մեդալի:

Քրդերեն տպագրվում է «Ռյա Թազա» 80-ամյա թերթը, ինչպես նաև ամիսը մեկ պարբերականությամբ՝ «Զագրոս» երկլեզու՝ հայերեն և քրդերեն թերթը:

ՀՈՒՅՆԵՐ:

2013 թ. Հանրային ռադիոյի եթերում հատկացվել է 15 րոպեանոց տևողությամբ ռադիոեթեր: Հունական համայնքը համագործակցում է նաև Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի հունարենի և մշակույթի կենտրոնի հետ: Հունական համայնքը զբաղվում է հույների կրթական, մշակութային, սոցիալական և իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում է ազգային և կրոնական տոներին նվիրված տարբեր միջոցառումներ, կազմակերպում է մայրենի լեզվի և գրականության ուսուցում: Գործում են կիրակնօրյա դպրոցներ, մշակութային, երիտասարդական, պատանեկան և մարզական միություններ: Հրատարակվում է եռալեզու հասարակական-քաղաքական, մշակութային բնույթի թերթ: Երևանի «Պոնտի» հունական հասարակական կազմակերպությունը մեծահասակների և փոքրահասակների համար շաբաթական երկու օր կազմակերպում է հունարենի դասընթացներ:

Ռուսներ

2013թ. ՀՀ ռուսաստանցի հայրենակիցների օգնության և աջակցության հիմնադրամը՝ ՀՀ ռուսական, ուկրաինական, հրեական, լեհական, հունական, ասորական և գերմանական համայնքների հասարակական կազմակերպություն-ների, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի, ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության և ՀՀ հանրային խորհրդի հետ համատեղ կազմակերպել է իրազեկման բնույթ կրող կոնֆերանսներ՝ ազգային փոքրամասնությունների իրավունքերի պաշտպանության թեմայով: 2013թ. հունիսի 9-ին Երևանում կազմակերպվել է կոնֆերանս

«Միջազգային իրավունքի կիրառումը ուղղված ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվական պահանջների պաշտպանության» թեմայով:

Սույն գործընթացը շարունակվել է մարզային սեմինարներում և կոնֆերասններում: Մասնավորապես՝ համաժողովներ են կազմակերպվել Գյումրիում /հունիս, 2013/, Վանաձորում /հոկտեմբեր, 2013/ և Տավուշի մարզում /հոկտեմբերին 2013/:

Կոնֆերանսին մասնակցել են արդարադատության նախարարության, մի շարք դեսպանատների, ՀՀ-ում ԵԽ և ԵԱՀԿ ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ նախագահի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ: Միջոցառմանը մասնակցել են նաև հասարակական և քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի աշխատանքները լայնորեն լուսաբանվել է հայաստանյան ԶԼՄ-ների կողմից:

Բոլոր մասնակիցներին բաժանվել են գրքույկներ՝ «ՀՀ ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին միջպետական եվրոպական փաստաթղթերի որոշ դրույթներ» վերնագրով, որը հրատարակվել է 500 օրինակով, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

Միջոցառումների արդյունքում պատրաստվել է համապատասխան նյութ և 2013թ. հոկտեմբերին փոխանցվել է ՀՀ Սահմանադրական դատարան: Նյութը ուղարկվել է նաև ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որտեղ այն քննարկվել է 2013 թ. դեկտեմբերի 20-ին և ընդունվել ի գիտություն՝ հետագայում սահմանադրական բարեփոխումների ժամանակ այդ առաջարկությունները հաշվի առնելու հեռանկարով:

ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի և ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի տևական քննարկումների արդյունքում Երևանի պետական համալսարանը (հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը) կազմել է վերապատրաստման համապատասխան ծրագիր և իրագործել այն: 2013թ. Երևանի պետական

համալսարանի հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնի հետ համագործակցությամբ, մշակել և իրականացրել է ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման 72-ժամյա ծրագիր՝ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Ծրագրի բաղադրիչներն են՝

1. ՀՀ օրենսդրություն (ազգային փոքրամասնությունների իրավունքների կտրվածքով),
2. ՀՀ կողմից վավերացված ոլորտին առնչվող հիմնական կոնվենցիաները (Եվրախորհուրդ, ԵԱՀԿ),
3. ՀՀ պետական կառավարման հարցեր,
4. Կառավարչական հմտություններ:

Ծրագրի մշակմանը մասնակցել և դասընթացի թեմաները վարել են ԵՊՀ, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողները, որոնք աշխատանքի ընթացքում առնչվում են ազգային փոքրամասնությունների հետ (ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արտաքին գործերի, կրթության և գիտության, մշակույթի և սփյուռքի նախարարություններ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, հասարակական կազմակերպություններ): Ծրագրում ընդգրկվել է նաև ՀՀ-ում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ:

Ծրագրի մշակման ընթացքում ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող փաստաթղթերի ձեռքբերման նպատակով ԵՊՀ-ն համագործակցել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ և ստացել հիմնարար փաստաթղթերի օրինակներ:

Դասընթացն ավարտվելուց հետո ԵՊՀ-ն շարունակել է արտաքին շահառուների հետ արդեն ձևավորված հարաբերությունները: ԵՊՀ դասախոսները և Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետը մասնակցել են ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպված գիտաժողովին, ինչպես նաև մեկնել են ՀՀ մարզեր (Վանաձոր և Իջևան) և հանդիպել տեղի ազգային

փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչներին ու ծանոթացել նրանց հուզող խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը հետևողականորեն աշխատում է հասարակության տարբեր շերտերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: Պարբերաբար հանդիպումներ են տեղի ունենում Հայաստանի Հանրապետության տարբեր գերատեչությունների ղեկավարների, նախարարների հետ, ինչպես նաև մամուլի ասուլիսներ տարբեր ակումբներում: Լրատավամիջոցներից շատերն իրենք են շահագրգիռ ազգային փոքրամասնությունների խնդիրները և մշակութային կյանքը լուսաբանելու առումով. դրանցից են «Առավոտ», «Ազգ», «Երկիր», «Հետք», «Լրագիր», «Հայոց աշխարհ» և այլ տպագիր և ինտերնետային թերթեր: ՀՀ բազմաթիվ հեռուստաընկերություններ հատուկ թողարկումներ են պատրաստում ազգային փոքրամասնությունների մասին:

2015թ. ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը՝ <<Ժողովրդական արվեստի հանգույց>> կրթամշակութային հիմնադրամի հետ համագործակցությամբ, ձեռնարկել է մի ծրագրի իրականացում, որով նախատեսվում է հնարավորություն ապահովել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ներկայացնելու իրենց համայնքը, ազգային ինքնությունը, մշակույթը և պատմությունը: Բացի այդ, նախատեսվում է վավերագրական ֆիլմերի նկարահանում, որով կներկայացվեն այդ համայնքներն իրենց մշակույթով ու կենցաղով: Ծրագրի հիմնական նպատակն է իրազեկել ՀՀ հասարակությանը այդ էթնիկ համայնքների մասին և նպաստել ինտեգրման գործընթացին:

2012թ. Հոկտեմբերին ՀՀ վարչապետը ընդունել է Համայն եզդիների հոգևոր առաջնորդ Միրե-Միրա Թախսին Բեգի գլխավորած բազմանդամ պատվիրակությանը և հավաստել, որ շարունակելու են ապահովել բոլոր հնարավոր պայմանները, որպեսզի եզդիական համայնքը ՀՀ-ում իրեն լավ զգա: Պատրաստակամություն է հայտնվել քննարկել այն հարցերը, որոնց լուծմանը

կառավարությունը կարող է օժանդակել: Հոգևոր առաջնորդի գլխավորած պատվիրակությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունել է աշխարհի եզդիների հոգևոր առաջնորդի այցը Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ի դեմս եզդիների հոգևոր առաջնորդի շնորհավորելով հայաստանաբնակ եզդիներին՝ սեպտեմբերի 29-ին Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում նոր կառուցված կրոնական տաճարի օրհնության առիթով: Նա մասնակցեց եզդիական կրոնի՝ Լալըշ կենտրոնից հետո աշխարհում թվով երկրորդ տաճար-համալիրի՝ Զիարատի օծման արարողությանը, որը կառուցվել էր 2011թ. Արմավիրի մարզի Ակնալիճ բնակավայրում:

Տարիներ առաջ ՀՀ «Աթուռ» ասորական ասոցիացիան՝ ՀՀ իշխանությունների աջակցությամբ և ՀՀԿ նյութական օգնությամբ ձեռնարկել էր Ասորի ժողովրդի 1915 թվականից ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցումը Երևանի կոնտրոնում, Նալբանդյան փողոցին հարող Օղակաձև այգում: Հուշարձանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 25.04.12թ.: Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու նպատակով եռօրյա ժամկետով ՀՀ էին այցել ել աշխարհի տարբեր երկրների ասորական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

27.10.13թ. Հայաստանի Պետական Ֆիլհարմոնիայի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ «Տարբեր ազգերի երգեր ու պարեր» փառատոնը, որին մասնակցեցին մի շարք պարային խմբեր, մեներգիչներ: Փառատոնին մասնակցում էին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ներկայացվեցին ինչպես հայկական երգեր ու պարեր, այնպես էլ ռուսական, իսպանական, հրեական:

Անկախ ազգային պատկանելությունից և դավանանքից՝ ազգային և կրոնական փոքրամասնություններն ինտեգրված են ՀՀ մարզերի հասարակական, մշակութային և կրթական գործընթացներում և ստեղծված են բոլոր պայմանները, հավասարության սկզբունքով, ՀՀ-ում գործող օրենքների սահմաններում դրսևորելու

իրենց ունակությունները և բավարարելու իրենց պահանջմունքները՝ որպես ՀՀ լիարժեք քաղաքացիներ:

«Գրական Արմավիր» ստեղծագործողների ակումբի կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի հովանավորությամբ տպագրված ժողովածուներում ընդգրկվել և ընդգրկվում են նաև քուրդ, եզդի, ասորի, ռուս և այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների լավագույն ստեղծագործությունները:

Մարզային «Հայրենականչ» թերթով, «Ալտ», «Նոյ Հայաստան», «Լույս» հեռուստաընկերություններով պարբերաբար տպագրվում են հոդվածներ, պատրաստվում հաղորդումներ՝ ներկայացնելով ազգային փոքրամասնությունների մշակութային, կրթական, տնտեսական և այլ ոլորտներում առկա խնդիրներն ու հաջողությունները:

Մարզում տարբեր առիթներով կազմակերպվող միջոցառումներում մշտապես ընդգրկվում են ազգային փոքրամասնությունների շնորհալի և տաղանդաշատ ներկայացուցիչները:

Մարզում ապահովվել է ազգային փոքրամասնությունների ազգային լեզուների ուսուցանում:

Համայնքներում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում աջակցություն է ցուցաբերվում եզդի ընտանիքների անդամների՝ յուրաքանչյուր դժվարության հանդիպող հարցերի լուծմանը:

Գյուղական համայնքներում աշխատում են ազգությամբ եզդի համայնքային ծառայողներ, կան նաև ավագանու անդամներ, ուսուցիչներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013/2014 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» հմ. 399-Ն որոշման 2-րդ կետի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով

պահուստային տեղերից մեկը հատկացվել է ազգային փոքրամասնությունների եզդի համայնքի ներկայացուցիչ Քրիստինե Քյարամի Հասոյանին՝ ուսումը Երևանի պետական համալսարանի «Արևելագիտություն (Իրանագիտություն)» մասնագիտության մագիստրատուրայում շարունակելու նպատակով: Յուրաքանչյուր տարի մրցույթից դուրս մնացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մագիստրատուրա ընդունվելու հարցը կքննարկվի ՀՀ կրթության և գիտության նախարարությունում և կտրվի անհատական լուծում: 2013թ. Երևանի ավագանու անդամ է դարձել ազգությամբ եզդի Արմեն Օվչիի Ամոյանը:

Հայաստանի Հանրապետության Հանրային Հեռուստառադիոընկերության Խորհրդի որոշմամբ 2014թ-ի Հանրային Հեռուստառադիո ընկերությանը պետական բյուջեով նախատեսված ընդհանուր հատկացումների հաշվին՝ ապահովում է օրական 15 րոպե տևողությամբ հունարենով ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում:

2013թ. փետրվարին ՀՀ պաշտպանության նախարարության Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի <<Մարտավարության լսարանը>> անվանակոչվել է եզդիների ազգային հերոս Ջհանգիր աղայի անունով:

2012թ. Մ. Մուրադյանի հեղինակությամբ հրատարակվել է Հայաստանի 1-ին Հանրապետության անդամ, Անդրկովկասի եզդիների առաջնորդ Ուսուբ Բեկ Թեմուրյանցին նվիրված պատմավավերագրական աշխատությունը:

Ազգային փոքրամասնությունների տարբեր համայնքներ հրատարակել են իրենց համայնքին վերաբերող փաստագրական տարբեր գրքեր.

- ռուսական համայնքը՝ 2009թ. «Ռուսները Հայաստաստանի պատմության մեջ» ռուսերեն գիրքը,
- եզդիական համայնքը՝ 2010թ. Ազիզ Թամոյանի և Հասան Թամոյանի հեղինակած «Եզդի ժողովրդի մասնակցությունը Ղարաբաղյան պատերազմում»,

- հրեական համայնքը՝ 2009 և 2010թթ. հրատարակվել է «Հրեաները Հայաստանում» ռուսերեն գիրքը,
- գերմանական համայնքը՝ 2009թ. Վ.Վուխրերի և Ն.Ալգուլյանի «Ռուսաստանի և Անդրկովկասի պատմության գերմանական էջերը», Ա. Դենգի «Ի հեճուկս օրվա», 2013թ. «Քո գերմանացիները Ռուսաստան ռուսերեն գրքերը,
- վրացական համայնքը՝ 2012թ. «Ալմանախ» ժողովածուն, որն ամփոփում է ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործությունները: